ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հ ա ղ ո ր դ ո ւ մ

Հայաստանի Հանրապետության դատախազության 2008 թվականի գործունեության մասին

Ազգային ժողովի մեծարգո նախագահ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, 2008թ. ընթացքում որոշակի աշխատանքներ է կատարել հանցավորության կանխարգելման, հանցագործությունների բացահայտման, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, հետաքննության և նախաքննության օրինականության ապահովման, դատարանում մեղադրանքի պաշտպանության, պետական շահերի պաշտպանության ոլորտում հայցեր հարուցելու, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և դատախազական գործունեության մյուս ոլորտներում: Գործունեության առավել կարևորություն ներկայացնող հարցերով կատարվել են ուսումնասիրություններ և վերլուծություններ, որոնց արդյունքները քննարկվել են դատախազության կոլեգիայում և խորհրդակցություններում:

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործառույթներին համապատասխան, աշխատանք է կատարվել մարդու, սեփականության, տնտեսական գործունեության դեմ ուղղված, ընդհանուր բնույթի, զինվորական, կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների բացահայտման, քննության որակի ու արդյունավետության բարելավման, դիմումների քննարկման, կազմակերպական-վերահսկողական, միջազգային համագործակցության և այլ ոլորտներում:

Հաշվետու տարում գրանցվել է հանցագործության 9271 դեպք՝ նախորդ տարվա 8428-ի դիմաց, դեպքերը աճել են 843-ով կամ 10 %-ով, որոնցից 113 դեպքով կամ 11%-ով աճել են <u>մարդու դեմ ուղղված հանցագործությունները</u> (974-1087): Ընդ որում, նկատվել է սպանության (71-78), սպանության փորձի (28-30), առողջությանը ծանր վնաս պատճառելու (185-215), սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների (33-63) որոշակի աճ, այդ թվում՝ բռնաբարության և բռնաբարության փորձի դեպքերի (8-19): Հանրապետությունում այս բնույթի հանցագործությունների աճը հիմնականում պայմանավորված է Երևան քաղաքում արձանագրված հանցագործությունների ցուցանիշով: Այսպես, եթե 2008թ. ընթացքում

հանրապետության բոլոր մարզերում արձանագրված՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 3.8 %, ապա Երևան քաղաքում՝ 21.3 %: Դրա հետ միաժամանակ նվազել են դիտավորությամբ առողջությանը այլ վնաս հասցնելու դեպքերը (521-505):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների աճին զուգընթաց՝ ինչ-որ չափով նվազել են այդ հանցագործությունների բացահայտման ցուցանիշները: Այսպես, նախորդ տարվա 87.8% բացահայտման դիմաց 2008 թվականին բացահայտումը կազմել է 85.5%: Նվազել է նաև սպանությունների (83%-73%), սպանության փորձերի (75%-73.5%), դիտավորությամբ մարմնական վնասվածքներ (85%-80%), այդ թվում՝ ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու (78.5%-77.5%), սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների (100%-97%) բացահայտումը : Ինչպես նախորդ տարի՝ 2008թ. ևս բացահայտվել են միայն բռնաբարության բոլոր դեպքերը:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերլուծությունը ցույց է տվել, որ այս բնույթի հանցագործությունների առանձին տեսակների աճը և նվազումը պայմանավորված է անհատական, սոցիալական, իրավական, կազմակերպական բնույթի բազմաթիվ գործոններով:

2008թ. ընթացքում մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով հարուցվել է 972 քրեական գործ: 6542 նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը, որից 4810-ով արդարացնող, իսկ 1732-ով՝ ոչ արդարացնող հիմքերով:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ստուգվել է 6706 նյութով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականությունը, որի արդյունքում 84 որոշում վերացվել է:

2008թ. ընթացքում մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հարուցված գործերից 253-ի կամ 35 %-ի վարույթը կարճվել է, որոնցից 109-ը կարճվել է արդարացնող, իսկ 144-ը՝ ոչ արդարացնող, հիմնականում տուժողների հետ հաշտվելու հիմքով:

196 քրեական գործի վարույթ կասեցվել է, որոնցից 154-ը՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու, իսկ 42-ը՝ մեղադրյալի հետախուզման կամ այլ հիմքերով, որոնցից վերացվել են վարույթը կարճելու մասին 26 և կասեցնելու մասին 23 որոշում:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս դատախազների կողմից տրվել է 384 գրավոր ցուցում, որոնցից 348-ը՝ նախաքննության, իսկ 36-ը՝ հետաքննության մարմիններին:

2008 թվականին մեղադրական եզրակացությամբ դատարաններ է ուղարկվել մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 459 քրեական գործ՝ 524 անձի վերաբերյալ: Դատական քննությունն ավարտված 405 քրեական գործից 365-ով (կամ 90 %-ով) 419 անձ դատապարտվել է, որոնցից 238-ը կամ 57 %-ը՝ ազատազրկման, այդ թվում 5-ը՝ ցմահ, 105-ը կամ 25 %-ը՝ տուգանքի, 70-ի կամ 16.8 %-ի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով, պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 15-ի կամ 3.6 %-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը):

Քննարկվող բնագավառի հետ կապված՝ ուսումնասիրվել է 2007թ. և 2008թ. 1-ին եռամսյակում գրանցված սպանությունների և սպանության փորձերի բացահայտման, այդ գործերով հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության, դատարանում մեղադրանքի պաշտպանության վիճակը, որի արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայում, բացահայտվել աշխատանքում տեղ գտած բացթողումները, կանխորոշվել դրանց վերացման կառուցակարգերը, տրվել հստակ հանձնարարականներ դրանք վերացնելու համար:

2008թ. ընթացքում արձանագրվել է <u>**սեփականության դեմ ուղղված**</u> հանցագործությունների աճ 623 դեպքով կամ 17%-ով (4297-3674), այդ թվում՝ 459 դեպքով կամ 21.3 %-ով Երևան քաղաքում (2616-2157):

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր աճի պայմաններում բացահայտման տոկոսը մնում է ցածր՝ 60,8% (2007թ.՝ 63,3%):

2008թ. քրեական հետախուզության գծով գրանցված 6936 (2007թ.՝ 6390) հանցագործության դեպքերից 3769-ը (2007թ.՝ 3094) կամ 54.3 %-ը (2007թ.՝ 48.4 %) անձնական ունեցվածքի հափշտակության դեպքեր են, որոնցից 2996-ը (2007թ.՝ 2444) կամ 79.5 %-ը (79 %) կազմում են անձնական ունեցվածքի գողության, այդ թվում՝ 1009-ը (2007թ.՝ 802) կամ 33.7%-ը (32.8 %)՝ բնակարանային գողության դեպքերը:

2008թ. ընթացքում գրանցված բնակարանային գողության 1009 դեպքից 481-ը (2007թ. 802 դեպքից 370-ը) բացահայտվել է, 398-ը (2007թ.՝ 357) մնացել է չբացահայտված, 130-ը (2007թ.՝ 75) գտնվում է ընթացքի մեջ, բացահայտումը կազմել է 54.7% (2007թ.՝ 50.9%), որը, թեև նախորդ տարվա ցուցանիշից բարձր է 3.8%-ով, սակայն բավարար համարվել չի կարող:

2008թ. ընթացքում արձանագրվել է ավազակային հարձակման դեպքերի 65,8%-ի կամ 50 դեպքի աճ: Գրանցվել է ավազակային հարձակման 126 (2007թ.՝ 76) դեպք, որոնցից 2-ը՝ հանրային ունեցվածքի : Վատթարացել է բացահայտման ցուցանիշը՝ 55,1% (2007թ.՝ 61.3%):

2008թ. ընթացքում արձանագրված կողոպուտի 224 (2007թ.՝ 121) դեպքից 123-ը (2007թ.՝ 68) բացահայտվել է, 76-ը (2007թ.՝ 43) չի բացահայտվել, 25-ը (2007թ.՝ 10) գտնվում է ընթացքի մեջ, բացահայտումը կազմել է 61,8% (61.3%):

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել է **տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների** 456 (2007թ.՝ 289) դեպք, որոնցից բացահայտվել է 210-ը (2007թ.՝ 158), բացահայտումը կազմել է 63,8 % (73.5 %) : 167 դեպքով ավելացել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների թիվը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության քննչական վարչության վարույթում քննվել է 238 քրեական գործ: 74 գործով 79 անձի նկատմամբ նախաքննությունն ավարտվել և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնցից 43-ը ՀՀ քր. օր.-ի 205-րդ, 6-ը՝ ՀՀ քր. օր.-ի 189-րդ, 16-ը՝ ՀՀ քր. օր.-ի 188-րդ, 6-ը՝ 188[1] , 3-ը՝ ՀՀ քր. օր.-ի 207-րդ հոդվածներով, որոնցից 71-ով՝ 76 անձի նկատմամբ կայացվել են դատավճիռներ, 3-ով՝ 3 անձի նկատմամբ դեռևս դատաքննությունը չի ավարտվել: 22 քրեական գործով վարույթը կարճվել է, որոնցից 9-ը՝ հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները հատուցելու, 1-ը՝ անձի մահվան, իսկ 12-ը՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: 45 գործով վարույթը կասեցվել է, որոնցից 39-ը՝ մեղադրյալի քննությունից թաքնվելու, 6-ը՝ հանցագործություն կատարած անձը հայտնի չլինելու հիմքերով: Մեղադրյալի քննությունից թաքնվելու հիմքով վարույթը կասեցված 39 քրեական գործից 24-ը հարկերը վճարելուց խուսափելու վերաբերյալ գործեր են:

Միացվել է նույն անձանց կողմից կատարված հանցագործությունների փաստերով հարուցված 14 գործ: 6 գործ քննչական ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին, անավարտ է մնացել 20 գործ:

Քննարկվող ժամանակահատվածում նախապատրաստված 16 նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը:

Վերացվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին 1 որոշում և հարուցվել քրեական գործ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության հետաքննության բաժնում նախապատրաստվել է 529 նյութ, որոնցից 185-ով հարուցվել է քրեական գործ, 64-ով մերժվել քրեական գործի հարուցումը, որոնցից 6-ով՝ համաներում կիրառելու, 1-ով՝ անձի մահվան, 3-ով՝ գործուն զղջալու, 54-ով՝ հանցակազմի բացակայության հիմքերով, 48 նյութ, ըստ ենթակայության, ուղարկվել է նախաքննության, 113-ը վերադարձվել հարկային տեսչություններ:

2008թ. ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության հետաքննության բաժնում մուտք է եղել մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման վերաբերյալ 319 նյութ, որոնցից 73-ն ըստ ենթակայության ուղարկվել է նույն կոմիտեի քննչական բաժին, 231-ով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության հիմքով, 15-ը փոխանցվել է 2009թ.: Վերացվել է նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու 5 որոշում, որոնցից 3-ով հարուցվել են քրեական գործեր ՀՀ քր. օր.-ի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և նախաքննություն կատարելու համար ուղարկվել քննչական բաժին, իսկ 2-ով՝

ՀՀ քր. օր.-ի 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ըստ ենթակայության:

ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննչական վարչության պաշտոնեական և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության բաժնում հաշվետու ժամանակում քննվել է 71 քրեական գործ: 13 գործ 17 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան և կայացվել են մեղադրական դատավճիռներ, 6-ով վարույթը կարճվել է, որոնցից 5-ով՝ հանցակազմի բացակայության, 1-ով՝ անձի մահվան պատճառով, 6 գործի վարույթ կասեցվել է, որոնցից 1-ը՝ հանցագործություն կատարած անձի անհայտ լինելու, 5-ը՝ մեղադրյալների քննությունից թաքնվելու հիմքերով, 1 գործ ուղարկվել է այլ քննչական մարմին, 36 գործ միացվել և քննվել է մեկ վարույթում, անավարտ է մնացել 9 գործ:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով պետությանը պատճառվել է ընդհանուր գումարով՝ 169.550.819 դրամի նյութական վնաս, որից վերականգնվել է 96.403.888 դրամը կամ 56.8%-ը:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով պետությանը պատճառվել է 1.801.578.239 դրամի նյութական վնաս, որից վերականգնվել է 522.660.000 դրամը կամ 29.0 %-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազները սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 115 գործ՝ 126 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկել են դատարան: Դատարան ուղարկած 115 գործից 13-ը՝ 17 անձի նկատմամբ, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործեր են:

2008թ. ընթացքում դատարաններում քննվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 670 գործ՝ 963 անձի վերաբերյալ: Դատապարտվել է 924 անձ, որոնցից 579-ը կամ 62.6%-ը՝ ազատազրկման, 85-ը կամ 9.2%-ը՝ տուգանքի, 258 անձի կամ 27.9%-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, Լոռու մարզում քննված 1 գործով 1 անձ արդարացվել է, 13 գործ նույնքան անձանց նկատմամբ կարճվել է՝ կողմերի հաշտության և համաներում կիրառելու հիմքով, 2-ի նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 102 գործ՝ 109 անձի նկատմամբ: Դատարան ուղարկված 102 գործից 64-ով 71 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ: 68 գործով դատապարտվել է 78 անձ, որոնցից 24–ը՝ ազատազրկման, 37-ը՝ տուգանքի, 17-ի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: Դատապարտված անձանցից 22-ը կին է, որոնցից 2-ը դատապարտվել է մաքսանենգության, 8-ը՝ ապօրինի և կեղծ ձեռնարկատիրության, իսկ 12-ը՝ հարկերը վճարելուց խուսափելու համար:

Քննարկվող բնագավառի հետ կապված՝ ուսումնասիրվել է 2008թ. 9 ամիսների ընթացքում ապօրինի և կեղծ ձեռնարկատիրության, հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու փաստերի վերաբերյալ (ՀՀ քր. օր.-ի 188, 189 և 205-րդ հոդվածներ) քննված քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակը, որի արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայում, տրվել հստակ հանձնարարականներ:

<u>ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչությունում</u> 2008թ. հունվարի 1-ի դրությամբ եղել է 18 անավարտ քրեական գործ (2007թ.՝ 21), վարույթ է ընդունվել 139 քրեական գործ՝ 2007թ.-ի 125-ի դիմաց: Դրանցից 69-ը (2007թ.՝ 66) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ, 18 (2007թ.՝ 33) քրեական գործի վարույթ կարճվել է, քննչական ենթակայության կարգով այլ մարմիններ է ուղարկվել 7-ը (2007թ.՝ 2), 1 (2007թ.՝ 1)

քրեական գործի վարույթ միացվել է, իսկ 20 քրեական գործի վարույթ կասեցվել է (2007թ.՝ 26), այդ թվում՝ մեղադրյալների քննությունից թաքնվելու հիմքով՝ 6-ը (2007թ.՝ 12), հանցագործությունը չբացահայտվելու հիմքով՝ 10-ը (2007թ.՝ 14): Անավարտ է մնացել 42 (2007թ.՝ 18) քրեական գործ:

Քրեական գործերի նախաքննությունը հիմնականում ավարտվել է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետների շրջանակներում :

Վարույթը կարճված 18 քրեական գործից հանցակազմի բացակայության հիմքով կարճվել են՝ 1 (2007թ.՝ 1), համաներման ակտով՝ 3 գործ՝ 3 անձի նկատմամբ (2007թ.՝ 7 գործ՝ 7 անձի նկատմամբ), իրադրության փոփոխման հիմքով՝ 12 գործ՝ 12 անձի նկատմամբ (2007թ.՝ 24 գործ՝ 24 անձի նկատմամբ), կողմերի հաշտության հիմքով 1 գործ՝ 1 անձի նկատմամբ (նախորդ տարում նման հիմքով քրեական գործի վարույթ չի կարճվել) և վաղեմության ժամկետն անցնելու հիմքով՝ 1 գործ (2007թ. նման հիմքով քրեական գործի վարույթ չի կարճվել):

2008թ. ընթացքում ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում և համապատասխան ստորաբաժանումներում նախապատրաստվել և վարչության դատախազական հսկողության ու դատավարական ղեկավարման տակ է գտնվել 173 նյութ, որոնցից 110-ով հարուցվել է քրեական գործ, 63-ով մերժվել է քրեական գործի հարուցումը, այդ թվում՝ հանցակազմի կամ հանցադեպի բացակայության հիմքով՝ 45-ը, ոչ արդարացման հիմքով՝ 18-ը:

Արագացված քննության կարգով քննվել է 49 գործ՝ 61 անձի նկատմամբ:

2008թ. ընթացքում վարչության դատախազների կողմից 80 գործով 93 անձի նկատմամբ պաշտպանվել է մեղադրանքը դատարանում և նշված գործերով ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 61 անձի նկատմամբ, կալանք՝ 3-ի, տուգանք՝ 12-ի, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն դատապարտվել է 15-ը:

Հայաստանի Հանրապետության տարածքում 2008թ. ընթացքում գրանցվել է **ընդհանուր բնույթի հանցագործության** 2843 (2007թ.՝ 2880) դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 37-ով կամ 1.3%: Երևան քաղաքում արձանագրվել է 1463, իսկ մարզերում՝ 1380 դեպք:

2008 թվականի ընթացքում գրանցվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության 763 (2007թ.՝ 1084) դեպք, որոնցից 284-ը՝ իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառության, 372-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների, կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության, 95-ը՝ թմրամիջոցներ գործածելու, 9-ը՝ մշակումն արգելված թմրանյութեր, հոգեներգործուն, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու, 2-ը՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելու կամ պահելու, 1-ը՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ստանալու իրավունք տվող դեղատոմսեր կամ այլ փաստաթղթեր ապօրինի տալու կամ կեղծելու:

2008թ. ընթացքում լիարժեք աշխատանքներ չեն կատարվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ արձանագրված 763 դեպքից, այդ թվում՝ իրացման, առանց իրացնելու նպատակի ձեռք բերման, օգտագործման եւ այլն, բացահայտվել է 595-ը կամ 77.9 %-ը, իսկ մնացած 168 դեպքից 83-ը չի բացահայտվել, իսկ 85-ը՝ փոխանցվել է 2009 թ.:

Նախորդ տարում արձանագրված 763 դեպքից 284-ը վերաբերել է թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը՝ իրացման նպատակով, որից բացահայտվել է 163-ը կամ 57.3 %-ը, տարբերությունը կազմող 121 դեպքից 74-ը չի բացահայտվել, իսկ 47-ով դեպքով հարուցված քրեական գործերը փոխանցվել են 2009 թ.:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ դեպքերի նվազումը պայմանավորված է ոչ թե թմրամոլության դեպքերի իրական նվազմամբ, այլ օպերատիվ-հետախուզական, քննչական գործողություններ, ինչպես նաև դատախազական ոչ արդյունավետ աշխատանքով:

Դեպքերի նվազումը պայմանավորված է նաև 2008թ. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 44^1 և 44^2 հոդվածները կրկին գործողության մեջ մտնելու հանգամանքով, որի արդյունքում ապաքրեականացվել է մանր չափերով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի և առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելը:

Իրավապահ մարմինների կողմից 2008թ. հայտնաբերվել և առգրավվել է 16,651գրամ մարիխուանա, 7586 գրամ ափիոն, 27 գրամ հերոին, 2 գրամ կոկաին, 109 գրամ հաշիշ, 94 հատ թմրամիջոցների և 225 հատ հոգեմետ հաբեր: Հարկ է նաև նկատել, որ հայտնաբերված թմրամիջոցների ընդհանուր թվաքանակի նվազմանը զուգընթաց ավելի քան կրկնակի աճել է ափիոն տեսակի թմրամիջոցի հայտնաբերումը և առգրավումը (3185-7586):

Սույն հանցատեսակի շարժընթացում նկատված բացասական դրսեւորումները եւ հիմնախնդիրները քննարկվել են ՀՀ դատախազության օպերատիվ-խորհրդակցություններում, կոլեգիայի նիստերում եւ դրանք վերացնելու, բացահայտման ցուցանիշները բարելավելու ուղղությամբ հստակ հանձնարարականներ են տրվել տարածքային դատախազություններին եւ կառուցվածքային ստորաբաժանումներին: Մասնավորապես՝ ցուցում է տրվել դատախազներին բարելավել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության վերաբերյալ քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության վիճակը՝ կարեւորելով հատկապես թմրամիջոցներ իրացնողների և նրանց հանցակիցների, ինչպես նաև թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ձեռքբերման աղբյուրների լիարժեք բացահայտումը:

Հաշվետու ժամանակահատվածում նվազել են հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 1802 (2007թ.՝ 2018):

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունները հանրապետությունում նվազել են 34 դեպքով (374-408), դրան հակառակ 8-ով աճել են մահվան ելքով դեպքերը (225-233), որի հետ մեկտեղ վատացել է նշված հանցատեսակի բացահայտման վիճակը: Ընդ որում, մահվան ելքով դեպքերի բացահայտումը կազմել է գրանցված դեպքերի 86%-ը (2007թ.՝ 89.1%):

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերի նվազումը հիմնականում պետք է բացատրել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը միայն տուժողի բողոքի հիման վրա հարուցելու հանգամանքով:

Հանրապետության ոչ բոլոր մարզերում եւ համայնքներում է արդյունավետ պայքար մղվում խուլիգանության դեմ: Վերջին երկու տարիների ընթացքում այդ բնույթի հանցագործությունների կտրուկ նվազումը պայմանավորված է ոչ թե խուլիգանության դեպքերի իրական նվազմամբ, այլ դրանք որպես մարմնական վնասվածքներ որակելով և կողմերի հաշտության հիմքով քրեական գործերի հարուցումը մերժելով, կարճելով: Համոզիչ չէ, որ, օրինակ, Աջափնյակ և Դավիթաշեն համայնքներում ամբողջ 2008 թվականի ընթացքում կատարվել է խուլիգանության 3 դեպք, Քանաքեռ-Զեյթունում՝ 4, Շենգավիթում՝ 6, Շիրակում՝ 6, այն դեպքում, երբ Արարատում այդ թիվը կազմել է 54, Լոռիում՝ 53, ինչի վրա հրավիրվել է տարածքային դատախազությունները գլխավորող դատախազների ուշադրությունը՝ նրանց առջեւ խնդիր դնելով բարձրացնել դատախազական հսկողության որակն ու արդյունավետությունը:

Հարցին հստակ իրավական կարգավորում տալու համար ՀՀ գլխավոր դատախազության կողմից առաջարկներ են ներկայացվել ՀՀ ԿԱ ոստիկանությանը: Համատեղ աշխատանքի արդյունքում, ՀՀ ոստիկանապետի 26.02.2009թ. N 468-Ա հրամանով հիշյալ հանցագործությունների վերաբերյալ մերժված նյութերն ու վարույթը կարճված քրեական գործերն այսուհետ սահմանված կարգով հաշվառվում են: Բացի այդ, հարցը քննարկվել է ՀՀ դատախազության կոլեգիայում և հանձնարարվել հասարակական կարգի կոպիտ խախտման և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում, արարքը դիտավորությամբ մարմնական վնասվածք պատճառել որակելու և հետագայում հաշտության կամ այլ հիմքերով անձին անհիմն պատասխանատվությունից ազատելու դեպքերը բացառելու նպատակով, ուսումնասիրել 2008թ. ընթացքում դիտավորությամբ մարմնական վնասվածք պատճառելու դեպքերը: Առավել մեծ ուշադրություն դարձնել զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարված չարամիտ խուլիգանության ճիշտ որակումներին և դրանցով իրականացվող համաչափ պատժողական քաղաքականությանը: Ստուգել դիտավորությամբ մարմնական վնասվածք պատճառելու վերաբերյալ կայացված՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականությունը, պարզելու, թե նախապատրաստված նյութում եղել են, արդյոք, այլ հանցագործության հատկանիշներ, այդ

թվում՝ նաև հասարակական կարգը կոպիտ խախտելու և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու առումով: Այդպիսի դեպքերով կամ խախտումներով կայացված որոշումների հայտնաբերման դեպքում ներկայացնել առաջարկ՝ որոշումը վերացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է խուլիգանության 286 (2007թ.՝ 241) դեպք, որոնցից 38-ը զենքի գործադրմամբ (2007թ.՝ 30): Դեպքերի նվազումը պայմանավորված է նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ, որի համաձայն խուլիգանությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության դեպքերն աճել են 47-ով (227-180), ինչը վկայում է ազգաբնակչության մոտ դեռեւս ապօրինի պահվող հրազենի և ռազմամթերքի առկայության մասին:

133 դեպքով կամ 34.4%-ով աճել են նաև պետական ծառայության և պետական կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները (519-386), այդ թվում՝ 57-ով (80-23) կամ 71.2%-ով աճել են իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը: Նշված հանցատեսակի աճը պայմանավորված է նաև 2008թ. մարտի 1-ի դեպքերով:

2008 թվականին 102-ով նվազել են ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայություններից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու դեպքերը: 2007-2008թթ. դեպքերի նվազումը վկայում է այս բնույթի հանցագործություններով դատախազության, զինկոմիսարիատի և ոստիկանության աշխատակիցների կողմից տարվող դրական, բացատրական աշխատանքների մասին:

2008 թվականի ընթացքում դատարաններում ընդհանուր բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննվել է 783 քրեական գործ՝ 958 անձի նկատմամբ: Հիշյալ քրեական գործերից 416-ով 505 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

Քննարկվող բնագավառի հետ կապված՝ ուսումնասիրվել են 2007թ. ընթացքում ապօրինի կերպով զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու (ՀՀ քր. օր-ի 235-րդ հոդված) վերաբերյալ հաղորդումների գրանցման, քննարկման կարգի, հարուցված քրեական գործերով դատախազական հսկողության վիճակի և մեղադրանքի պաշտպանության պրակտիկան, 2008թ. 1-ին կիսամյակում թմրամիջոցների ապօրինի շրջանառության (ՀՀ քր. օր-ի 266-268-րդ հոդվածներ) դեպքերով հաղորդումների ընդունման, նյութերի նախապատրաստման, նախաքննության իրականացման և դատարաններում մեղադրանքի պաշտպանության բնագավառներում իրականացված դատախազական հսկողության վիճակը, 2008 թվականի գարնանային և աշնանային զորակոչի ընթացքում հանցագործությունների և օրինախախտումների առթիվ ձեռնարկված դատախազական ներգործության միջոցները, որոնց արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայում, բացահայտվել աշխատանքում տեղ գտած բացթողումները, կանխորոշվել դրանց վերացման կառուցակարգերը և կայացվել են համապատասխան որոշումներ: Զորակոչի կազմակերպման եւ անցկացման ընթացքում դատախազության ուսումնասիրությունների արդյունքներով ի հայտ եկած բացթողումներն ու հիմնախնդիրները քննարկվել են նաեւ ՀՀ ազգային անվտանգության խորհրդի նիստում՝ հիմք հանդիսանալով որորտը կարգավորող մի շարք ակտերի, այդ թվում ՀՀ օրենքներում, կառավարության որոշումների փոփոխություններ կատարելու համար: Քննարկման արդյունքներով ՀՀ Նախագահի կողմից տրվել է համապատասխան կարգադրություն:

Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինները 2008թ. ընթացքում որոշակի աշխատանք են կատարել <u>կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով</u> օրինականության պահպանման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության և այդ բնագավառին վերաբերող դատախազական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2008թ. ընթացքում քննչական մարմինների կողմից նախապատրաստվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 524 նյութ, որոնցից 390-ով (2007թ.՝ 120) հարուցվել է քրեական գործ:

2008թ. դատարաններում քննվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 155 քրեական գործ՝ 182 անձի նկատմամբ, որոնցից 153 քրեական գործով դատապարտվել է 178 անձ: Ընդ որում, դրանցից 66 քրեական գործով 82 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ: Դատապարտված 178 անձից 130-ը եղել է պաշտոնատար անձ: Դատապարտված անձանցից 66-ը ենթարկվել է ազատազրկման, 61-ը՝ տուգանքի, մյուսները՝ այլ պատիժների:

Կոռուպցիոն հանցագործություններով 2007թ. պետությանը պատճառված վնասը կազմել է 1 մլրդ 594 մլն 777 հազ. դրամ, որից վերականգնվել է ընդամենը 71 մլն 346 հազ. դրամը, կամ 4,5%-ը, իսկ 2008թ. պետությանը պատճառված վնասը ավարտված քրեական գործերով կազմել է 2 մլրդ 115 մլն 258 հազ. դրամ, որից վերականգնվել է 529 մլն 046 հազ. դրամը, կամ ավելի քան 25%-ը, որն այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունք է:

Կարճված քրեական գործերով պատճառված նյութական վնասը կազմել է 1 մլն 273 հազ. դրամ, իսկ մերժված նյութերով՝ 466 մլն դրամ, որոնք ամբողջությամբ վերականգնվել են:

Քննչական մարմինների կողմից քննվել է կոռուպցիոն բնույթի 257 քրեական գործ, որոնցից 24-ը՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության, 18-ը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության, 21-ը՝ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության, 181-ը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական ծառայությունների, իսկ 13-ը՝ պաշտպանության նախարարության քննչական ծառայության կողմից:

Կոռուպցիոն հանցագործությունների գործերով նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության հետ կապված լիազորությունները կենտրոնացնելու և մասնագիտացված ուղղությամբ իրականացնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի 19.11.2008 թ. N 82 հրամանով հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների նոր ցանկ, համաձայն որի՝ կոռուպցիոն համարված ՀՀ քր. օր-ի թվով 31 հանցագործությունների մասով նշված բոլոր լիազորություններն իրականացվելու են ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության կողմից:

Դրա հետ մեկտեղ, իրավապահ, այդ թվում, դատախազական մարմինների աշխատանքում դեռևս կան թերություններ, որոնց վերացման նպատակով այդ բնագավառի աշխատանքների արդյունավետության բարձրացման պահանջ է առաջադրվել: Մարզերի և համայնքների դատախազները դեռևս չեն ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները կոռուպցիոն բնույթի հանցագործությունների ամբողջ ծավալների բացահայտման, հանցագործություններում ներգրավված բոլոր անձանց հայտնաբերման ու քննության որակի բարելավման ուղղությամբ, ինչպես նաև ապօրինի ճանապարհով ձեռք բերված եկամուտները հայտնաբերելու, այդ բնույթի հանցագործությունների դեմ միասնական պրակտիկա ձևավորելու և քննության մեթոդիկան կատարելագործելու ուղղությամբ: Այս խնդրի լուծմանն են միտված եղել հաշվետու տարում շահագրգիռ բոլոր իրավապահ և մյուս պետական մարմինների, ինչպես նաև ներպետական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հակակոռուցիային նվիրված ՀՀ դատախազության կազմակերպած երկու փնջային և մեկ հանրապետական խորհրդակցությունները: Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ կոռուպցիոն բնույթի երևույթների բացահայտման նպատակով խթանելու հասարակության ակտիվությունը, այդ բնագավառի աշխատանքները դարձնելու առավել թափանցիկ ու մատչելի: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ կոռուպցիոն երևույթներն առավել շատ տարածված են բնակչության սպասարկմանն առնչվող մարմինների ստորին և միջին պաշտոնատար անձանց շրջանում և այդ պատճառով էլ, նման երևույթների բացահայտմանը զուգահեռ, որպես նախականխիչ աշխատանքների միջոց, հատկապես կարևորվել է դրանց կատարմանը նպաստող պայմանների ու պատճառների բացահայտումը և կոռուպցիայի դեմ պայքարում համագործակցված հատուկ կառուցակարգերի կանխորոշումը: Այդ խորհրդակցությունները կկրեն շարունակական բնույթ: 2008 թվականի հունիսի 7-ին՝ Վանաձոր, իսկ օգոստոսի 2-ին՝ Եղեգնաձոր քաղաքներում տեղի ունեցած փնջային, ապա՝ նոյեմբերի 28-ին Երեւանում տեղի ունեցած հանրապետական խորհրդակցությունների արդյունքում հրապարակվել է ամփոփ ձեռնարկ :

Կատարվածով հանդերձ, նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության ապահովման, դատախազությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացման առումով, գործնական և էական խոչընդոտներ են ստեղծում գործող օրենսդրությամբ, հատկապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, դատախազի համար սահմանված սահմանափակումները՝ կապված առանձին դատավարական և քննչական գործողություններին, անհրաժեշտության դեպքում, մասնակցելու կամ անձամբ կատարելու, և այլ գործընթացների հետ, ինչը խոչընդոտում է դրանց նկատմամբ լիիրավ հսկողություն իրականացնելուն:

Հիշյալ նկատառումներից ելնելով, ՀՀ դատախազության անմիջական մասնակցությամբ մի քանի անգամ կազմվել և ՀՀ Կառավարության ու ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ հիմնավորմամբ և առաջարկների փաթեթով:

Այդ փոփոխությունների ընդունումն առավել արդյունավետ կդարձնի նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունն ու կապահովի «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ դատախազի պատասխանատվությունը:

Այսպիսով, 2008թ. հանցավորության վիճակի շարժընթացում որոշակի մտահոգության տեղիք են տալիս առանձին տեսակի հանցագործությունների աճի, լատենտայնության (քողարկվածության), ինչպես նաև բացահայտման ցուցանիշները: Նշված հարցերը բազմիցս բարձրացվել են ՀՀ դատախազության կոլեգիաների և իրավապահ մարմինների հետ անցկացված խորհրդակցությունների ու ամփոփումների ընթացքում, հանձինս կոլեգիայի որոշումների և ՀՀ գլխավոր դատախազի ու նրա տեղակալների համապատասխան հրամանների, ցուցումների, հանձնարարականների, միջնորդությունների, հաղորդումների ու միջնորդագրերի՝ կանխորոշվել են հանցավորության դեմ պայքարի, հանցագործությունների կանխարգելման, դրանց բացահայտման և այդ բնագավառներում դատախազական հսկողության արդյունավետության բարձրացման հստակ կառուցակարգերը:

2008թ. ընթացքում <u>պետական շահերի պաշտպանության</u> բնագավառում ՀՀ դատախազության կողմից կատարվել է 357 (2007թ.՝ 516) ստուգում, հայտնաբերվել է 480 իրավախախտում, օրենքի խախտման անթույլատրելիության մասին նախազգուշացվել է 213 անձ, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով նախապատրաստվել է 219 նյութ, որոնցով հարուցվել է 286 հայց, պետբյուջե է վերականգնվել 555 մլն 152 հազար դրամ:

Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով, ինչպես նաև պետական շահերի խախտման վերաբերյալ ստացված հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով պետական շահերի պաշտպանության վարչությունում հարուցվել է 19 (2007թ.՝ 16) քրեական գործ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ, 179-րդ, 184-րդ, 188-րդ, 308-րդ, 314-315-րդ, 325-րդ և 338-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով: Նշված քրեական գործերը հարուցվել են պետական մարմիններից, այդ թվում՝ ՀՀ վերահսկիչ պալատից և այլ մարմիններից ու անձանցից ստացված հաղորդումների հիման վրա նյութեր նախապատրաստելու, ինչպես նաև վճռաբեկ բողոք բերելու վերաբերյալ պետական մարմինների միջնորդությունները քննարկելու ընթացքում հայտնաբերված հանցագործությունների հատկանիշներով: Հարուցված քրեական գործերով պետբյուջե է վերականգնվել 549 մլն 245 հազար դրամ, որից՝ ավարտված քրեական գործերով՝ 16 մլն դրամ, մինչդատական վարույթի ընթացքում՝ 533 մլն 245 հազար դրամ (2007թ. ընթացքում հարուցված քրեական գործերով գումար չի վերականգնվել): Քրեական գործերից 8-ը հարուցվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հատկանիշներով:

2008թ. ընթացքում դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, ներառյալ պետական շահերի պաշտպանության վարչության կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցվել է 93 քրեական գործ (2007թ.՝ 74), որոնցից ավարտվել է 51 քրեական գործի նախաքննությունը՝ դատարան է ուղարկվել 33, կարճվել է 18 քրեական գործ, պետբյուջե է վերա-կանգնվել 606 մլն 288 հազար դրամ, որից մինչդատական վարույթի ընթացքում՝ 541 մլն 666 հազար դրամ, ավարտված քրեական գործերով՝ 58 մլն 122 հազար դրամ, դատաքննության ընթացքում՝ 6 մլն 500 հազար դրամ (2007թ.՝ 16 մլն 600 հազար դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում պետական շահերի պաշտպանության վարչության նախագծերով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 821 մլն 280 հազար դրամի հայցապահանջով դատարան է հարուցվել 32 հայց (2007թ.՝ 21): Դատարաններն ամբողջությամբ բավարարել են 25 հայց՝ 554 մլն 659 հազար դրամ գումարի բռնագանձման պահանջով (2007թ. 14 հայց՝ 113 մլն 360 հազար դրամ գումարով): Դատական ակտերի հիման վրա փաստացի վերա-կանգնվել է 83 մլն 222 հազար դրամ:

2008թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության վարչության դատախազները տարբեր դատական ատյաններում մասնակցել են ընդհանուր առմամբ 44 քաղաքացիական և վարչական գործերով տեղի ունեցած դատաքննությունների:

2008թ. ընթացքում դատախազության կողմից դատարան է հարուցվել 328 հայց՝ 1 մլրդ 63 մլն 827 հազար դրամի բռնագանձման պահանջով (2007թ. 471 հայց՝ 3 մլրդ 30 մլն 76 հազար դրամի պահանջով): Դատարաններում քննվել է 316 հայց, որոնցից բավարարվել է 791.377,0 հազար դրամի հայցապահանջով 300 հայց (2007թ. 397 հայցով բավարարվել է 388 հայց՝ 1 մլրդ 588 մլն 449 հազար դրամի պահանջով): Մերժվել է 14 հայց՝ 36.858,0 հազար դրամի բռնագանձման պահանջով: Դատաքննության ընթացքում փաստացի վերականգնվել է 111.864,0 հազար դրամի գումար: Նշված բնագավառում դատախազության մարմինների հարուցած հայցերի քանակի նվազումը հիմնականում պայմանավորված է «Դատախազության մասին» Հա-յաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով՝ հայց հարուցելու հիմքերի առկայության դեպքում քաղաքացիական հայց հարուցելու նպատակով նյութեր նախապատրաստելու լիազորությունը դատախազության մարմինների կողմից բավարար չափով չիրականացնելու հանգամանքով:

2008թ. ընթացքում դատախազության և պետական մարմիններից ստացվել է ստորադաս դատարանների դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ 282 միջնորդություն (2007թ.՝ 220), որոնց քննարկման նպատակով դատարաններից պահանջվել և ուսումնասիրվել է 258 (2007թ.՝ 202) քաղաքացիական գործ, մերժվել է վճռաբեկ բողոք բերելու վերաբերյալ 122 միջնորդություն, բերվել է 119 վճռաբեկ բողոք, 42 միջնորդություն քննարկման ընթացքում է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից նախորդ տարվա ընթացքում ներկայացվել է 119 վճռաբեկ եւ 1 վերաքննիչ բողոք: Վճռաբեկ բողոքներից բավարարվել է 42-ը (2007թ.՝ 20), 1 վճռաբեկ բողոք հետ է վերցվել (2007թ.՝ 2), դատարանի կողմից հետ է վերադարձվել 55-ը (2007թ.՝ 34), 6-ը մերժվել է (2007թ.՝ 4), իսկ 15 վճռաբեկ բողոք դեռևս չի քննարկվել:

Քննարկվող բնագավառի հետ կապված՝ ուսումնասիրվել է 2007թ. ընթացքում պետական մարմինների հարուցած կամ նրանց դեմ ներկայացված հայցերի, դրանց հիման վրա ընդունված դատական ակտերի հիմնավորվածության, բողոքարկման ու կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքների ընթացքում պետական շահերի պաշտպանության վիճակը, որի արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայում, բացահայտվել աշխատանքում տեղ գտած բացթողումները, կանխորոշվել դրանց վերացման կառուցակարգերը և կայացվել համապատասխան որոշում:

Վերը նշված աշխատանքներով հանդերձ, պետական շահերի պաշտպանության բնագավառում ՀՀ դատախազությանն օրենսդրությամբ վերապահված լիազորություններն իրականացնելիս, ծագել են բնագավառի ոչ հստակ իրավական կարգավորման որոշակի հիմնախնդիրներ՝ կապված տարբեր իրավանորմերի հակասականության հետ, որոնց վերացման նպատակով ՀՀ դատախազության կողմից կազմվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկությունների փաթեթ, որը գտնվում է քննարկման փուլում:

<u>Օտարերկրյա դատական ատյաններում պետական շահերի պաշտպանության ոլորտում</u>

ՀՀ դատախազությունը շարունակել է աշխատանքներ կատարել «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ԱՄՆ-ի Վաշինգտոն քաղաքի Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնում Հայաստանի Հանրապետության դեմ հարուցված արբիտրաժային հայցի պաշտպանության ուղղությամբ, որի հայցային պահանջի չափը կազմում է 400 մլն ԱՄՆ դոլար:

2008 թվականի փետրվարի 25-ին Հայաստանի Հանրապետության և «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի միջև կնքվել է հաշտության համաձայնագիր, որի հիման վրա արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարը 09.05.2008թ. որոշում է կայացրել դատավարության դադարեցման մասին:

Որոշակի աշխատանքներ են իրականացվել նաև Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում հարուցված «Թի Էս Ինվեսթմենթ ընկերությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» արբիտրաժային գործի շրջանակներում, որի ընթացքում ՀՀ դատախազությունը համագործակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ և գործնական աջակցություն ցուցաբերել հայցի դեմ առարկություններ նախապատրաստելու և արբիտրաժային դատարանում Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու աշխատանքներում:

Քննարկվող ժամանակաշրջանում զգալի աշխատանքներ են կատարվել **պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ** դատախազական հսկողություն իրականացնելու բնագավառում:

Դրանք վերաբերել են քրեակատարողական հիմնարկներում օրինականության պահպանման ընդհանուր վիճակին, պատժի կատարմանը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների փոփոխմանը և դադարեցմանը, ձերբակալված և կալանավորված անձանց ու դատապարտյալների իրավունքների պահպանմանը, ծանր հիվանդության պատճառով պատժից ազատելուն, դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն: Հատուկ քննարկման առարկա են դարձել քրեակատարողական հիմնարկներում անձանց պահելու պայմաններին, ռեժիմին, կենցաղային, սոցիալական, առողջապահական ոլորտներին առնչվող խնդիրները:

2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ կալանավորվածների և դատապարտյալների թիվը կազմել է 3539, իսկ 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3965 կամ 426-ով ավելի:

2008թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 1496 անձ, որոնցից 468-ը՝ պատիժը լրիվ կրելու, 562-ը՝ պայմանական վաղաժամկետ կարգով, 27-ը՝ ներմամբ, 302-ը՝ խափանման միջոց կալանքը փոփոխելու, 130-ը՝ դատարանի դահլիճից ազատվելու, 7-ը՝ հիվանդության պատճառով: Տարբեր հիվանդություններից մահացել է 26 դատապարտյալ, որոնցից 14-ը «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկում: 2009թ. հունվարի 1-ի դրությամբ ազատազրկման վայրում է գտնվել 164 կին, որոնցից 23-ը՝ սպանության, 34-ը՝ խարդախության, 14-ը՝ կավատության, 13-ը՝ գողության, 14-ը՝ թմրամիջոց իրացնելու, 2-ը՝ մարմնական վնասվածք պատճառելու մեղադրանքով: Նույն ժամանակաընթացքում անազատության մեջ է գտնվել 57 անչափահաս, որոնցից 2-ը՝ սպանության, 8-ը՝ դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու, 8-ը՝ ավազակության, 3-ը՝ կողոպուտի, 22-ը՝ գողության մեղադրանքով:

Ձերբակալված և կալանավորված անձանց ու դատապարտյալների իրավունքների պահպանման վիճակի ուսումնասիրությունից պարզվել է, որ ԱՆ քրեակատարողական հիմնարկների կողմից հիմնականում պահպանվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը: Այնուհանդերձ, ստուգումների արդյունքում կալանավորվածների և դատապարտյալների իրավունքների պահպանման ոլորտում նույնպես արձանագրվել են խախտումներ, թերություններ և բացթողումներ, որոնք վերաբերում են վարչակազմի կողմից ընդունված որոշումների բողոքարկման իրավունքի իրականացման երաշխիքները չապահովելուն, դիմում-բողոքները գրաքննության ենթարկելուն, տեսակցությունների տրամադրման կարգը, տույժի միջոցների նշանակման և դրանց կիրառման կարգը խախտելուն, դատապարտյալների անձնական անվտանգությունն ապահովելուն, դատապարտյալներին ըստ մեկուսացվածության աստիճանի քրեակատարողական հիմնարկներում տեղաբաշխելու կարգը խախտելուն, ուղղիչ հիմնարկի տեսակը սխալ որոշելուն, ռեժիմը խախտելու դեպքերին և այլն, որոնց վերացման ուղղությամբ հաղորդումներ են ուղարկվել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին և ՀՀ արդարադատության նախարարին:

Հարկ է նշել, որ դատապարտյալին ծեծի ենթարկելու և մարմնական վնասվածք պատճառելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով Վարդաշեն քրեակատարողական հիմնարկի 3 աշխատակից դատապարտվել են, նրանց թվում՝ քրեակատարողական հիմնարկի

պետի տեղակալ Գ. Հովհաննիսյանը կալանավորվել և այնուհետև դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով: Իսկ, ընդհանուր առմամբ, 13 քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է 112 անձի կողմից կատարված 98 հանցագործության դեպք, այդ թվում՝ սպանության՝ 1, փախուստի՝ 3, փախուստի փորձի՝ 3, միջին ծանրության մարմնական վնասվածք պատճառելու՝ 1, խուլիգանության՝ 2, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու՝ 1, պատիժն ի կատար ածող հիմնարկի գործունեությունը խոչընդոտելու՝ 3, գողության՝ 2, թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության 70 դեպք: Հանցագործությունների թիվն ավելի քան կրկնակի աճել է (2007թ.՝ 45 դեպք, աճ՝ 59 դեպքով կամ 131 %-ով):

Հանցագործությունների աճը գրանցվել է հիմնականում ի հաշիվ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման (36-70), ինչը պայմանավորված է քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի, այլ իրավապահ մարմինների և դատախազության համատեղ, համագործակցված աշխատանքի արդյունավետությամբ ու հանցագործության դեպքերը չգրանցելու և հաշվառումից թաքցնելու արատավոր պրակտիկայի վերացմամբ: Արձանագրված դեպքերից 34-ով թմրամիջոցներն ուղղիչ հիմնարկներ են ներթափանցել հանձնուքներում թաքցնելու ճանապարհով:

Քրեակատարողական վարչության և ՔԿ հիմնարկների վարչակազմերի ուժերով կատարվել է շարքերի մաքրումը հանցագործության ուղի բռնած աշխատակիցներից, այդ թվում՝ նաև ՔԿՀ թմրանյութ տեղափոխողներից: Միայն 2008թ. ընթացքում հարուցված 9 քրեական գործով մեղադրվել է ՔԿՀ-ի 11 աշխատակից, որոնցից 6-ի նկատմամբ կայացվել են մեղադրական դատավճիռներ, իսկ 5-ի վերաբերյալ քրեական գործերը գտնվում են նախաքննության փուլում:

Վարչության կողմից ուսումնասիրվել է նաև ՔԿ հիմնարկներից փախուստի և փախուստի փորձի պատճառներն ու պայմանները: Պարզվել է, որ այդ հանցագործությունների պատճառ են եղել ՔԿՀ աշխատակիցների ռեժիմային թույլ հսկողությունը, արգելապատերի, վանդակաճաղերի թերությունները ժամանակին չվերացնելը: Օրինակ, Կոշ ՔԿՀ-ի դատապարտյալներ Խնկոյանը և Խողոյանը, օգտվելով արգելապատի քանդված լինելուց, փախուստի փորձ են կատարել, սակայն բռնվել են ՔԿՀ-ի աշխատակիցների կողմից: Ներկայումս ՔԿՀ-ի տարածքը շրջապատող արգելապատերը լրիվ նորոգվել են և բարձրացվել:

Սևան ՔԿՀ-ի բաց տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալ Առաքելյանը լքել է հիմնարկի տարածքը, ձեռք բերել թմրամիջոց և, օգտվելով ՔԿՀ-ի արգելապատի քանդված լինելուց, փորձել է աննկատ վերադառնալ ՔԿՀ, սակայն հայտնաբերվել է ՔԿՀ-ի աշխատակիցների կողմից:

Դեռևս մեծ թիվ են կազմում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց մոտ ՔԿՀ-ում շրջանառությունն արգելված իրերի ու առարկաների առկայությունը:

Այսպես, ռեժիմային միջոցառումների արդյունքում հայտնաբերվել և առգրավվել են 3300 միավոր կտրող-ծակող գործիք, 1240 հատ բջջային հեռախոս, 169 գրամ թմրամիջոց, այդ թվում՝ 61 գրամ ափիոն, 69 գրամ մարիխուանա, 02 գրամ հերոին և այլն:

Դատախազական պատշաճ հսկողության արդյունքում նկատելի կարգ ու կանոն է հաստատվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների փոփոխման ու դադարեցման, ծանր հիվանդության պատճառաբանությամբ պատժից ազատման, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման աշխատանքներում: Շարունակվում են հատուկ հսկողության տակ գտնվել առանձնապես ծանր հանցագործություններ, մասնավորապես՝ ծանրացնող հանգամանքներում սպանություն կատարած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների փոփոխման և դադարեցման, նրանց՝ ծանր հիվանդության պատճառաբանությամբ ազատման, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքերը:

Նույնը վերաբերում է նաև «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում բուժման անվան տակ դատապարտյալների կամ կալանավորների տևական ժամկետով անհիմն պահելու դեպքերի վերացմանը: Նման միջոցառում իրականացվել է 2007 և 2008 թվականներին՝ նվազագույնի հասցնելով դատապարտյալներին և կալանավորված անձանց

տևական ժամանակով, առանց դրա անհրաժեշտության հիվանդանոցում պահելու դեպքերը: Այդ բնագավառում դատախազական ներգործության աշխատանքները պետք է լինեն շարունակական և հետեւողական: Պետք է նկատել, որ յուրաքանչյուր՝ ստացիոնար բուժման կարիք չունեցող դատապարտյալների հիվանդանոցում տեղավորելը իր մեջ պարունակում է նաև կոռուպցիոն ռիսկեր:

Դրա օրինակ է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի աշխատակից Կարապետ Գյորդակյանի կողմից դատապարտյալի պատիժը կրճատելու և դատապարտյալների հիվանդանոցում գտնվելու ժամկետը երկարացնելու համար վերջինիս հարազատից 1 մլն 200 հազար դրամի կաշառք ստանալու պահին բռնվելու փաստի առթիվ հարուցված քրեական գործը:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի համաձայն, հոգեբուժական հիվանդանոցներում, անչափահասների դաստիարակչական հաստատություններում՝ մանկատներում և գիշերօթիկ դպրոցներում, վարչության կողմից ուսումնասիրվել է անձանց ազատության սահմանափակման և ազատությունից զրկելու, օրինականության, նյութակենցաղային ապահովվածության վիճակը, որի ընթացքում նույնպես արձանագրվել են որոշակի խախտումներ և բացթողումներ: Հատկապես մտահոգիչ է մանկատների և գիշերօթիկ հաստատությունների կողմից կատարված գնումների գործընթացը: Պարզվել է, որ մի շարք հաստատությունների կողմից գնված սննդամթերքի մեծածախ գները էապես բարձր են խանութների մանրածախ գներից: Նախապատրաստված նյութերն ուղարկվել են համապատասխան տարածքային քննչական բաժիններ:

Հետագա պատիժը կրելու նպատակով հաշվետու տարում Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվել արտերկրում ազատազրկման ձևով պատիժը կրող ՀՀ 10 քաղաքացի, այլ պետությունների է հանձնվել ՀՀ-ում պատիժը կրող 3 (կին) դատապարտյալ: ՀՀ տեղափոխված դատապարտյալների դատավճիռները համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը :

<u>Դատախազական աշխատանքի ամփոփ ընդհանրական տվյալներ.</u>

2008 թվականի ընթացքում ՀՀ դատախազության կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել 18763 նյութի նախապատրաստման, 15639 քրեական գործի նախաքննության և հետաքննության նկատմամբ: Դատախազների կողմից վերացվել է հետաքննության և նախաքննության մարմինների կայացրած 299 որոշում: Քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմիններին տրվել է 1366 գրավոր ցուցում: Մինչդատական վարույթում դատախազների կողմից դատարան է ներկայացվել, ինչպես նաև դատախազների մասնակցությամբ քննվել է 63 միջնորդություն (որպես խափանման միջոց կալանքի, խուզարկության և դատավարական հարկադրանքի այլ միջոցների կիրառման): Դատարանում մեղադրանքը պաշտպանվել է 2138 քրեական գործով: Դատախազների կողմից քրեական գործերով դատական ակտերի՝ դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերվել է 121 վերաքննիչ և 38 վճռաբեկ բողոք: Ընդ որում, 121 վերաքննիչ բողոքից բավարարվել է 35-ը, իսկ 38 վճռաբեկ բողոքից՝ 11-ը: ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 328 հայց, որոնցից դատարանի կողմից քննության է առնվել 316-ը, բավարարվել է 300-ը: Կատարվել է 2464 ստուգում (ուսումնասիրություն, ամփոփում, այդ թվում՝ պետական շահերի պաշտպանության և պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտներում): Կազմվել և ներկայացվել է 522 նախազգուշացում, հաղորդում և միջնորդագիր: Ընթացք է տրվել 9436 դիմումի, բողոքի և առաջարկության:

<u>ՀՀ զինվորական դատախազության</u> մարմինների կողմից 2008թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 2914 (2007թ.՝ 2064) դեպք: Արձանագրված դեպքերից 2015-ը կամ 69.1%-ը եղել են պատահարներ, իսկ 899-ը՝ հանցագործություն, որոնցից՝ 562-ը՝ զինվորական, իսկ 337-ը՝ այլ ընդհանուր:

2007թ. համեմատ պատահարները աճել են 701-ով կամ 53.3%-ով, իսկ հանցագործությունները՝ 149-ով կամ 19.9%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները աճել են 33-ով կամ 6.2%-ով, իսկ այլ հանցագործությունները՝ 116-ով կամ 52.5%-ով: Եթե 2007թ. արձանագրված 750 հանցագործություններից 82-ը կամ 10.9%-ը եղել են ծանր և առանձնապես ծանր, որոնցից 45-ը՝ ծանր, իսկ 37-ը՝ առանձնապես ծանր, ապա 2008թ. նույն

ժամանակահատվածում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները եղել են 103-ը կամ 11.5%-ը, որոնցից 61-ը՝ ծանր, 42-ը՝ առանձնապես ծանր: Այսինքն՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ծանր հանցագործություններն աճել են 16, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 5 դեպքով:

Առանձնապես ծանր հանցագործություններից 27-ը սպանության փորձ է, որոնցից 24-ը կատարվել է հակառակորդի կողմից, 11-ը սպանություն է, որոնցից 4-ը կատարվել է հակառակորդի, 6-ը՝ համածառայողների կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է զինծառայողների մահվան 71 (2007թ.՝ 50) դեպք, որոնցից 32-ը (2007թ.՝ 41) կամ 45.1%-ը (82%) կապված է ծառայության հետ: Ծառայության հետ կապված մահվան դեպքերը նվազել են 9-ով:

2008թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացած զինծառայողներից 4-ը սպանվել է հակառակորդի, 6-ը՝ համածառայողների կողմից, 2-ը զոհվել է ականի պայթյունից, 3-ը՝ զենքի օգտագործման կանոնները խախտելու հետևանքով, 5-ը ինքնասպանություն է կատարել, 6-ը զոհվել է վթարի, 6-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով: Մահացած զինծառայողներից 4-ը եղել են սպա, 1-ը՝ ենթասպա, 3-ը՝ պայմանագրային և 24-ը՝ ժամկետային զինծառայող:

Նշված ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 1680 զինծառայող, այսինքն՝ արձանագրվել է աճ 510 դեպքով: 84 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք, 1558-ը՝ միջին ծանրության և թեթև, 38-ի մարմնական վնասվածքների ծանրության աստիճանը դեռևս չի պարզվել: 416 դեպքով մարմնական վնասվածքները պատճառվել են հանցագործությունների, իսկ 1264-ը կամ 75.2%-ը՝ պատահարների հետևանքով:

2008թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների հսկողությամբ նախապատրաստվել է 1566 նյութ (2007թ.՝ 1191), որոնցից 578-ով (2007թ.՝ 456) հարուցվել է քրեական գործ, 777-ը մերժվել է (2007թ.՝ 585), 508-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով (2007թ.՝ 307), 138-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 3-13-րդ կետերով (2007թ.՝ 101) և 131-ը՝ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդ. 2-րդ մասով (2007թ.՝ 177), 104 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 107 նյութ փոխանցվել 2009թ.: 777 մերժված նյութից 762-ի օրինականությունը ստուգվել և հաստատվել է, իսկ 15 նյութով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները վերացվել են: 7 վերացված նյութով հարուցվել են քրեական գործեր:

Դիտարկվող ժամանակաշրջանում ՀՀ ՊՆ ՌՈՎ մարմինների և զորամասերի կողմից նախապատրաստվել և ընթացք է տրվել 2245 նյութի (2007թ.՝ 1507), որոնցից 1458-ով մերժվել է քր. գործի հարուցումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքերով (2007թ.՝ 816), 736-ը ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 51-ը փոխանցվել է 2009թ.:

Հետաքննության մարմինների կողմից նախապատրաստված նյութերով կայացված մերժման որոշումներից 46-ը կայազորների դատախազների կողմից վերացվել են և ուղարկվել լրացուցիչ նախապատրաստման:

Նախորդ տարի ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՊՆ քննչական վարչության բաժինների վարույթում քննվող 954 քրեական գործի նկատմամբ (2007թ.՝ 613): Դրանցից 88-ը փոխանցվել է 2007թ., 578-ը հարուցվել է 2008թ., 76-ը ստացվել է այլ մարմիններից, 204-ով վերսկսվել է նախաքննությունը, 8 քրեական գործ դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության (2007թ.՝ 3): 687 քրեական գործերի նախաքննությունն ավարտվել է (2007թ.՝ 613): Ավարտված քրեական գործերից 450-ը ուղարկվել է դատարան (2007թ.՝ 346), որոնցից 447-ը՝ 562 անձի նկատմամբ՝ մեղադրական եզրակացությամբ, 3-ը՝ 3 անձի նկատմամբ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ (2007թ.՝ 2-ը՝ երկու անձի նկատմամբ): 234 քրեական գործով վարույթը կարճվել է (2007թ.՝ 265)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 1-ին մասի 3-13-րդ կետերով, 2-րդ մասով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով:

95 քրեական գործով վարույթը կասեցվել է (2007թ.՝ 101), 33 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 25-ը միացվել է այլ գործերի, 111-ը փոխանցվել է 2009թ.: Դատախազների կողմից վերացվել է քրեական գործի վարույթը կարճելու 12, կասեցնելու՝ 2 որոշում:

2008թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հանցագործությամբ պետությանը պատճառված վնասը կազմել է 33.591.053 դրամ, իսկ քաղաքացիներինը՝ 15.552.389 դրամ: Պետությանը պատճառված վնասից մինչդատական վարույթում վերականգնվել է 29.915.624 դրամ, իսկ քաղաքացիներին պատճառված վնասից՝ 9.527.399 դրամ: Բացի այդ, միջոցներ են ձեռնարկվել հանցագործությամբ առողջությանը պատճառված վնասի հետևանքով պետպատվերի շրջանակում կատարված բուժման ծախսերի փոխհատուցման ուղղությամբ: Այդ նպատակով ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից ՀՀ քր. դատ. օր.-ի 156-րդ, 158-րդ հոդվածների կարգով ներկայացվել է 39 հայցադիմում՝ 6.372.084 դրամ գումարի փոխհատուցման վերաբերյալ: Դատարանները 31 հայցադիմում 4.010.828 դրամ գումարի պահանջով բավարարել են: Փաստացի վերականգնվել է 2.304.095 դրամի վնաս: 3 հայցապահանջ մերժվել է, որոնց դեմ բողոք չի բերվել:

ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից իրականացված 314 ուսումնասիրություններով և ստուգումներով հայտնաբերվել է պետական շահերի 265 (2007թ.՝ 180) խախտում, արձանագրվել է պետությանը պատճառված 1.169.132.800 դրամի վնաս (2007թ.՝ 497.397.088 դրամ), որից 251.203.200 դրամը վերականգնվել է արտադատական կարգով (2007թ.՝ 381.218.407 դրամ), 211.903.000 դրամ բռնագանձելու պահանջի մասին հայցեր են հարուցվել դատարաններ: Ընդհանուր առմամբ պետությանը 707.216.300 դրամի վնաս պատճառելու փաստերի առթիվ հարուցվել է 10 քրեական գործ և նախապատրաստվել է 34 նյութ (2007թ.՝ 9 նյութ), որոնց հետագա ընթացքը հանձնարարվել է ՀՀ ՊՆ քննչական վարչությանը: Պետության շահերին հասցված վնասը կամովին վերականգնելու մասին 86 (2007թ.՝ 85) նախազգուշացում է արվել:

Արտադատական կարգով և պետական շահերի պաշտպանության հայցերի բավարարման արդյունքում ընդհանուր առմամբ վերականգնվել է պետությանը պատճառված 253.168.200 դրամի վնաս (2007թ.՝ 382.466.206 դրամի):

Քննարկվող բնագավառի հետ կապված՝ 2008 թվականի ընթացքում ուսումնասիրվել են 2008 թվականի գարնանային և աշնանային զորակոչի ընթացքում հանցագործությունների և օրինախախտումների առթիվ ձեռնարկված դատախազական գործունեության արդյունքները, 2006-2007թթ. ընթացքում ՀՀ ԶՈՒ-ում արձանագրված հանցագործությունների վերաբերյալ դատարան ուղարկված քրեական գործերով դատարանների կողմից ՀՀ քր. օր.-ի 64-րդ և 70-րդ հոդվածների կիրառման պրակտիկան, դրա արդյունավետությունը գնահատելու, ճիշտ պատժողական քաղաքականություն իրականացնելու առումով դատախազական գործունեության խնդիրները:

<u>Միջազգային-իրավական հարաբերությունների</u> բնագավառում ՀՀ դատախազությունը, միջազգային կոնվենցիաներին, պայմանագրերին, համաձայնագրերի դրույթներին համապատասխան, հաշվետու ժամանակահատվածում ընթացք է տվել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն կազմակերպելու վերաբերյալ ՀՀ դատախազությունում ստացված 59 և դատախազությունից ուղարկված՝ իրավական օգնություն ցույց տալու մասին 42 միջնորդության: Ստացված 59 միջնորդությունից 25-ը ԱՊՀ անդամ-պետություններից է, իսկ 34-ը՝ օտարերկրյա այլ պետություններից: Ուղարկված 42 միջնորդությունից 29-ը ԱՊՀ անդամ-պետություններից է, իսկ 13-ը՝ օտարերկրյա այլ պետություններից:

Հանցագործների հանձնման մասին ԱՊՀ անդամ-պետություններից ստացվել է 99 միջնորդություն, իսկ ուղարկվել է 58-ը: Օտարերկրյա այլ պետություններից ստացվել է 2 միջնորդություն, իսկ ուղարկվել է 6-ը:

Քրեական հետապնդում իրականացնելու նպատակով այլ պետությունների իրավապահ մարմիններին ուղարկվել և նրանցից ստացվել է 35 քրեական գործ, ինչպես նաև ՀՀ

դատախազությունում ստացվել է այլ երկրների կողմից հետախուզվող ՀՀ-ում հայտնաբերված 170 անձի վերաբերյալ հաղորդում:

Դատախազությունը կարեւորում է հանցավորության դեմ պայքարում իրավական օգնության, տեղեկատվության օպերատիվ փոխանակման եւ հանցագործների հանձնման հետ կապված հարցերում միջգերատեսչական հարաբերությունների ձեւավորումը այլ պետությունների գործընկեր պետական մարմինների հետ: Արդեն իսկ 11 պետությունների համապատասխան գերատեսչությունների հետ ստորագրվել են երկկողմանի համագործակցության համապատասխան փաստաթղթեր, որոնցից երկուսը՝ 2008 թվականին: Հուշագրերի կնքման համաձայնություններ են ձեռք բերվել Ռումինիայի, Չեխիայի, Տաջիկստանի և Ուզբեկստանի Հանրապետությունների գլխավոր դատախազությունների հետ, որոնց հետ համաձայնագրերի ստորագրումը գտնվում է նախապատրաստական փուլում:

Հայաստանի Հանրապետության դատախազությունն անդամակցում է ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների Համակարգող խորհրդին դրա հիմնադրման օրվանից՝ 1993 թվականի հունվարից, իսկ 1999 թվականից հանդիսանում է Դատախազների Միջազգային Ընկերակցության (ԴՄԸ) և Եվրոպայի գլխավոր դատախազների կոնֆերանսի լիիրավ անդամ:

Նախորդ տարվա ընթացքում ՀՀ դատախազությունն իրականացրել է տարբեր իրավական ակտերի մշակման աշխատանքներ: Մասնավորապես՝ ՀՀ գործող օրենսդրությամբ ՀՀ դատախազությանը վերապահված գործառույթների իրականացման ընթացքում ի հայտ եկած օրենսդրական բացերն ու տարբեր օրենքների միջեւ առկա հակասությունները վերացնելու համար մշակվել եւ ՀՀ Կառավարություն է ուղարկվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», ««Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը և «Լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը: Ընդհանուր առմամբ՝ կոնկրետ առաջարկություններ և դիտողություններ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության 30 օրենքների, ՀՀ Կառավարության 23 որոշումների, միջազգային կառույցներից ստացված 11 փաստաթղթերի վերաբերյալ:

2008 թվականին ՀՀ դատախազությունում աշխատանքի է ընդունվել 18 աշխատակից: ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով 49 աշխատակից տեղափոխվել է տարբեր պաշտոնների: Համակարգից ազատվել է 21 աշխատակից: Հետեւողական աշխատանք է իրականացվում դատախազների կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները պատշաճ իրականացնելու, հնարավոր չարաշահումները բացառելու ուղղությամբ՝ ի հայտ բերելու պաշտոնեական պարտականությունների նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի դրսևորման դեպքերը և ըստ այդմ՝ գործող օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: 2008 թվականին հարուցվել է 4 կարգապահական վարույթ՝ 5 դատախազի նկատմամբ, արդյունքում՝ «նկատողություն» կարգապահական տույժի է ենթարկվել 3 դատախազ, իսկ «աշխատանքից ազատում» տեսակի տույժ կիրառվել է 2 դատախազի նկատմամբ: Պաշտոնեական պարտականությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելու դեպքերի առթիվ ՀՀ գլխավոր դատախազի կողմից հարուցվել է 2 քրեական գործ, որոնց մասին տեղեկատվություն է տրամադրվել նաև զանգվածային լրատվության միջոցներին: Կարծում ենք, որ նման քրեական գործերի մասին հասարակությանն իրազեկելը կարող է ունենալ կանխարգելիչ նշանակություն բոլոր իրավապահ մարմինների աշխատակիցների համար և նման հրապարակային աշխատառճը շարունակվելու է նաև 2009 թվականին:

2008թ. աշխատանքներ են կատարվել <u>**ՀՀ դատախազությունում ստացված դիմումներն ու բողոքները**</u> սահմանված ժամկետում քննարկելու, դիմումների քննարկման արդյունավետությունը բարձրացնելու, տեղ գտած թերություններն ու խախտումները վերացնելու, ինչպես նաև քաղաքացիների ընդունելությունը բարելավելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազությունում ստացվել է 9436 դիմում-բողոք, որոնցից 2312-ը եղել է կրկնակի, բավարարվել է 1251-ը, մերժվել է 1839-ը, ուղարկվել է այլ

մարմին 3003-ը, 247 անանուն դիմում առանց քննարկման է թողնվել, քրեական գործի նյութերին կցվել է 474-ը, անավարտ է մնացել 116-ը: ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է 138 քաղաքացու ընդունելություն :

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը 2008 թվականի ընթացքում ուսուցման և որակավորման բարձրացման դասընթացների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման բնագավառում իրականացրել է 332 դատախազի և 270 պետական ծառայողի վերապատրաստում, ինչպես նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 16 անձանց մասնագիտական պատրաստում: Տարբեր բուհերի 101 ուսանողի համար կազմակերպվել է արտադրական պրակտիկա:

Ուսումնական և գիտամեթոդական գրականության ստեղծման ու հրատարակման բնագավառում տպագրվել են Եվրոպայի խորհրդի և ՀՀ գլխավոր դատախազության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում անցկացված սեմինարների ընթացքում կարդացված դասախոսությունների ժողովածուները (5 ժողովածու) և դատախազության ղեկավար կազմի տարեկան վերապատրաստման շրջանակում՝ «Կառավարման հոգեբանություն» ուսումնական ձեռնարկը, ինչպես նաև ձայնասկավառակով թողարկվել է նույն ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը: Բացի այդ՝ նախաձեռնել է էլեկտրոնային գրադարանի ստեղծումը:

ՀՀ դատախազությունում ուսումնասիրվել են 2008 թվականի կիսամյակային (եռամսյակային, տարեկան) աշխատանքների վերաբերյալ ՀՀ դատախազության համակարգում գործող դատախազություններից ու կառուցվածքային ստորաբաժանումներից, ինչպես նաև ՀՀ հետաքննության և նախաքննության մարմիններից ու ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված համապատասխանաբար դատախազական և քննչական աշխատանքների և հանցավորության վիճակի մասին վիճակագրական հաշվետվությունները, որոնց արդյունքներով կազմվել են համապատասխան ամփոփ վիճակագրական հաշվետվություններ, վերլուծական և տեղեկատվական տեղեկանքներ և այլ փաստաթղթեր: Նշված բնագավառի աշխատանքներն իրավական կարգավորման ենթարկելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ, դատախազությունների, դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների և մյուս շահագրգիռ պետական մարմինների կարծիքներն ու առաջարկությունները հաշվի առնելով, մշակվել են քննչական աշխատանքի վիճակագրական հաշվետվությունների լրացման ու ներկայացման կարգերը և ձևերը, որոնք հաստատվել են ՀՀ Կառավարության 23.10.2008թ. N 1225 որոշմամբ:

ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ընդունվել է կազմակերպական բնույթի 90 հրաման, ուղարկվել է 18 տեղեկատվական նամակ, որոնցով կանոնակարգվել են դատախազական գործունեության կազմակերպմանն ուղղված մի շարք հիմնարար գործընթացներ, այդ թվում՝ դատախազների և դատախազության աշխատակազմում պետական ծառայողների կարգավիճակի, ատեստավորման, վերապատրաստման, թափուր պաշտոնների զբաղեցման, ՀՀ դատախազությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների և դրանց իրականացման կառուցակարգերի հստակեցման և իրավական կարգավորման, դատախազության գործունեության միատեսակության և միասնականության ապահովման, միջազգային համագործակցության հարցերը և այլն:

ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «ՀՀ դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանով սահմանվել է ՀՀ դատախազության կանոնակարգը, որով ՀՀ դատախազության համակարգում ընդգրկված դատախազությունների և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, իրավասությունների շրջանակները հստակեցվել ու կանոնակարգվել են: Բացի այդ, սահմանվել են կազմակերպական, վերլուծական, ծրագրման ու հաշվառման աշխատանքների և վերահսկողության իրականացման, իրավական ակտերի մշակման, քննարկման և ընդունման, կոլեգիայի գործունեության, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և քաղաքացիների ընդունելության կարգերը, ինչպես նաև գործավարության կարգի հիմնական դրույթները:

Հրատարակվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների 2007-2008թթ. հրամանների և հանձնարարականների ժողովածուն:

ՀՀ գլխավոր դատախազության 2008 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակի աշխատանքային ծրագրերով նախատեսված 18 կետով կատարվել են ուսումնասիրություններ և ամփոփումներ, որոնց արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայում, կամ ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալներին առընթեր օպերատիվ խորհրդակցություններում:

Դատախազության գործունեության հիմնարար հարցերի քննարկման նպատակով հրավիրվել է ՀՀ դատախազության 12 կոլեգիա, որոնց մասնակցել են ՀՀ իրավապահ և մյուս պետական մարմինների, ինչպես նաև տարբեր շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, 2009 թվականին շարունակելով իրականացնել օրենսդրությամբ վերապահված լիազորությունները, կանի հնարավորինս՝ հանրապետությունում օրինախախտումների դեմ տարվող պայքարին, սահմանադրական և հասարակական կարգն ամրապնդելուն օժանդակելու, պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև օրինականության պահպանման հետ կապված սահմանադրական լիազորություններից բխող մյուս խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, բացահայտելով դատախազական գործունեության կազմակերպման ու իրականացման աշխատանքում տեղ գտած թերություններն ու բացթողումները, կարվեն դրանցից բխող համապատասխան հետևություններ՝ հետագայում աշխատանքներն ավելի արդունավետ և նպատակային իրականացնելու համար:

Հարգանքով՝

Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ